

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բագուի սոսկալի արկածը:—Սկզբնապատճառը. արիւնհեղոսեան առաջին ժամերը. ողբերգութեան երկրորդ օրը. զ'շերուայ զինադադար. երկու ակա-
նաւոր հայ ընտանիքների կործանում. անձնուէր եւ ոչ—ուրա կանայք. փաստաբան Թադէոսեանի այրուելն ամբողջ ընտանիքով. Բալասանիի քաջ
հայ երիտասարդներ. կազակների դերը. Բագուի քաղաքագլխի եւ քաղա-
քային խորհրդի դատասարտելի անտարբերութիւնը. մի անձնուէր քաջ
հայ. աղէտի արձագանքը Թիֆլիսում. Թիֆլիսի քաղաքագլխի միջամտու-
թիւնը. Թիֆլիսի թեմի առաջնորդի գործունէութիւնը. հոգեհանգիստներ
Վանքի մայր եկեղեցում եւ Քաշվէթում. Ազգիս վիհ. Հայրապետի ժամա-
նումը Թիֆլիս. անդրկովկասեան Մուֆտիի ճառը Վանքի ղաւում. հոգե-
հանգիստ վրացի աշակերտների կողմից Վանքում. հոգեհանգիստ մզկիթում.
չարիքի պատճառները. հանգստակութիւն Թիֆլիսում, Բագուում եւ ամենու-
րեք. նահատակների թիւը. հայերի փախուստը Բագուից. նահատակների
թաղումը. հայ կնոջ առաքինութիւնը. խաղաղութեան վերահաստատում.
Բագուի իրաւաբանների ժողովը. բարձրագոյն նշանակուած քննութիւնը.
կոտորածի ազդեցութիւնը Սրբւանում. խաղաղութեան շուտափոյթ վերա-
հաստատում. վեհ. Հայրապետի հեռագիրները Պարսից Շահին եւ թագա-
ժառանգին եւ նոցա պատասխանները:—Վուրսկի դէպքերը:—Գուրխայի
շարժումը:—Սեւ ծովի ափի դաշթականներ:—Կովկասի փոխարքայութիւ-
նը:—Մամուլի ներկայացուցիչների ժողով:—Վեհ. Կաթողիկոսի պատգա-
մաւորութիւնը Ս. Պ. Բուրգ:—Նամակ Ս. Պ. Բուրգից. Է. ԲԱԲԱՅԵԱՆՑ:
—Նամակ Շուշուց. ՊՕՂ. ԶԱՔ.:—Նամակ խմբագրութեան:

Տխուր պարտականութիւնը հարկադրում է մեզ ամսագիր
դարձած «Լուսնայի» այս հոգը բաժանմունքի առաջին տեսու-
թիւնը զրեթէ բացառապէս նուիրել Բագուի սոսկալի դէպքերի
նկարագրութեանը: Այս պատճառով տեղի սղութիւնը մեզ թոյլ
չի տալիս այսօր խօսել Ռուսիայի և Կովկասի ներքին կեանքի
շատ կարեւոր խնդիրների մասին:

Երկուշաբթի փետրուարի 7-ին Թիֆլիսում տարածուեց
մի սոսկալի լուր, թէ ահա երկրորդ օրն է Բագուում սկսուել է

կոտորած հայերի մէջ, Լուրը չարագուշակ քամու պէս անցաւ ամբողջ քաղաքով: Ոչ ոք առաջին պահ չէր ուզում հաւատալ: Իրիկնադէմին աղէտաբեր լուրը հաստատուեց և սարսափը տիրեց ամենքին: Ստացուեցին մի քանի մասնաւոր հեռագիրներ, անցան ձեռքից ձեռք, կարդացուեցին փողոցներում, հրապարակներում, կլուբներում: Հետեւալ օրը Թիֆլիսի լրագրներում երևացին առաջին տեղեկութիւնները:

Ասում են կոտորածը միանգամայն անսպասելի էր: Ասում են հայերի և թուրքերի յարաբերութիւններն այնքան սերտ բարեկամական էին, որ ոչ ոք չէր կարող երևակայել անգամ, թէ այդ յարաբերութիւնների մէջ մտել է մի սև ձեռք: Այս այնքան էլ ճիշդ չէ և նրանք, որոնք կրկնում են այս և այժմ էլ պնդում, կամ անտեղեակ են Բագուի կեանքին կամ զուրկ աղետալի դէպքերը իրանց սկզբնական նշաններից գուշակելու ընդունակութիւնից:

Նկարագրենք իրողութիւնը: Դեռ անցեալ տարուայ հոկտեմբերին դիտող մարդու համար զգալի էր, որ երկու հարեւան ազգութիւնների իրաւ որ սերտ բարեկամական յարաբերութիւնները վտանգի են ենթարկուում: Ո՞ւր շնորհով, ինչո՞ւ— ոչ ոք չէր կարող ճիշդ բացադրել: Բայց պարզ և անհերքելի էր մի ինչ—որ դիւային գաղտնի ոյժի ներկայութիւնը:

Մի թուրք խօսքով վերաւորում է մի հայ պատանու: Ներկայ է լինում մի քանի հայ երիտասարդ և պաշտպանում է վերաւորուածին:

Սկսում է վէճ թուրքի և հայի մէջ: Վէճը սուր կերպարանք է ստանում և բարդանում: Հետեւեալը մի քանի մասնաւոր սպանութիւններ հայերից և թուրքերից:

Սովորական դէպքեր ամենուրեք Կովկասում, մանաւանդ Բագում: Բայց այսքանն էլ բաւական է թշնամութիւն սերմանող դիւային ոյժի համար: Այն ոյժի, որ այսօր—վաղը, յոյս ունինք, պիտի երևան գայ անդիմակ, արդարամիտ քննութեան շնորհով:

Ով նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին եղել է Բագում, կարող էր զգալ, որ օդից արեան հոտ է բուրում: Միայն Բագուի կոյր, ինքնահաւան, իր կօշիկ ծայրից դէնը ոչինչ չտեսնող և իւր սեպհական շահերից դէնը ոչինչ ճանաչող հայ ինտելիգենցիան չէր զգում այդ հոտը: Փաստեր ունինք, որ առանձին անհատներ նախագուշակել են աղէտը, զգուշացրել են ինտելիգենցիային և ինտելիգենցիան, շատ չնչին բացառութեամբ, ամօթալի և յանցաւոր անտարբերութեամբ է վերա-

բերուել չար գողակութիւններին: Մի խումբ մտածող և խելացի անհատներ հայերից և թուրքերից խորհրդակցել են չարիքի առաջն առնելու, բայց, ըստ երևոյթին, արդէն ուշ է եղել: Չարիքն արդէն խոր արմատներ է գցած եղել և պէտք է շուտով տար իւր պտուղները... Եւ այսօր անխոհեակեղբայր Բագուի ողբերգութեան մէջ մեղադրուում են այնպիսի մարդիկ, որոնք ընդհակառակը ջանք չեն խնայել այդ ողբերգութիւնը արմատից ջնջելու:

Սոսկալի արիւնհեղութեան առաջին ժամերն այսպէս են պատմւում: Կիրակի, փետրուարի 6-ին զալիս է հայոց եկեղեցու բազը ոմն Ալի-Ռզա Բաբանով և ատրճանակի հարուածով վիրակտրում մի հայ ղինուորի: Այդ հայը իբրև թէ դիտմամբ սպանած է լինում Բաբանովի ազգականին, մի բանտարկեալի, որ դատարանից բանտ տանելիս փորձել է փախչել: Բաբանովին ձերբակալում են փողոցում ոստիկանները և մի քանի փողոց անցնելուց յետոյ արձակում: Թուրքը կառք է նստում, վերադառնում է դէպի հայոց եկեղեցի, որի բազը լիքն է լինում ամբոխով: Անցնելով փողոցով, նա աջ ու ձախ կառքից ատրճանակ է արձակում: Հայերը կատաղում են, պահում են կառքը, ցած իջեցնում Բաբանովին, մէկը դաշոյնի հարուած է տալիս նրան: Թուրքը փորձում է փախչել, ստանում է գնդակի հարուածներ և սպանւում:

Գալիս են Բաբանովի ազգականները, վերցնում են դիակը, դնում պատգարակի վրայ և, ուղիղ դէպի տուն տանելու փոխարէն, մի մոլլայի և երկու ոստիկանի ուղեկցութեամբ շրջեցնում են փողոցներում, գողալով. «վրէժ, վրէժ»: Թուրք ամբոխը, որին դիւային ոյժը վաղուց է նախապատրաստած լինում հայերի դէմ, զրգուում է, զինւում և կոտորածը սկսում: Կիրակի օրը կատաղի ամբոխի վրիժառութեանը զոհ են դառնում մօտ 35 անմեղ հայեր: Բոլորն էլ վէրք են ստանում ետևից, կը նշանակէ առանց դիմադրութեան, փախչելու ժամանակ:

Այսպէս է սկսւում կոտորածը: Կան և՛ ուրիշ վարիացիներ, բայց բոլորն էլ միմեանց հակասում են և մենք չենք վստահանում առաջ բերել բոլոր պատմութիւնները, յուսալով, որ մի օր կունենանք ողբերգութեան ճիշդ արձանագրութիւնը:

Իրականադէմին կիրակի հայերը փակւում են իրանց տներում, տիրում է ժամանակաւոր խաղաղութիւն: Բայց զազանային կրքերն արդէն զրգուում են, ամբոխի կատաղութիւնը ետում է: Գիշերուայ ընթացքում քաղաքի այս ու այն մասե-

րում սպանւում են դարձեալ մի քանի հայեր: Խեղճ ազգ ենք մենք նրանով ամենից առաջ, որ միշտ ուշ ենք տեսնում մեր թշնամուն:

Գալիս է երկուշաբթին, ողբերգութեան երկրորդ սոսկալի տեսարանը բացւում է: Մինչև 10 ժամը առաւօտեան թուրքերը ոչինչ չեն անում, անցնում են փողոցներով խումբ-խումբ, բայց արդէն ղինուած: Նրանք թոյլ են տալիս, որ հայերը դուրս գան իրանց տներից, միշտ և յաւիտեան անդէն խաղաղասէր «կուլտուրական» հայերը: Պանութները բացւում են, աշակերտները դիմում են ուսումնարան, սովորական կեանքը սկսւում է: Եւ ահա մօտ տասը ժամին լսում են ատրճանակների և հրացանների պայթիւններ: Օդի մէջ շողշողում են դաշոյնները, որոնք իջնում են անմեղ անցորդների, մանուկների, ծերերի, կանանց գլուխներին: Անմիջապէս խանութները փակւում են, տների դռները կողպւում, ձիաքարը դադարում է երթևեկել, կառքերն անհետանում են: Փակւում են և բանկերը, Բաղաքային վարչութիւնը և ուրիշ շատ հիմնարկութիւններ: Փողոցները յանձնւում են կատաղի և ֆանատիկոս խուժանին: Կոտորածը, աւելի ու աւելի սաստկանալով, հասնում է ծայրայեղութեան: Փողոցները ծածկւում են դիակներով: Թուրքերը ձիաւորներ են ուղարկում մերձակայ գիւղերը, օգնութիւն պահանջում: Գալիս են «Բերդանկա» հրացաններով ղինուած թուրքեր Բալաշարի, Սաբունչի, Ռամանի և այլ գիւղերից:

Այժմ, երբ եղելութեան մանրամասնութիւնները սկսում են պարզուել, գրեթէ բոլոր հայերը միաբերան պնդում են, որ Բագուի կոտորածում գլխաւոր դեր կատարողները եղել են հէնց գիւղերից եկածները: Քաղաքի թուրքերը ահագին մեծա-մասնութեամբ աւելի պաշտպանել են հայերին քան կոտորել... Քաղաքի Շամախինիկա և Զեմբերեքենդ մասերի հայերը, որ մեծ մասամբ կենում են թուրքերի տներում, իրանց տնատէրերից հանդիպել են մեծ պաշտպանութեան: Եւ այսպիսով շատ անպաշտպան ընտանիքներ են փրկուել խուժանի կատաղութիւնից:

Այժմ ոչ ոք չի կասկածում, որ դիւային ոյժի ձեռքում գործիք է եղել Բագուի թուրքերի աւաղակային, ստոր դասակարգը, որի համար ամեն մի հանրային խլրտում ձեռնառու է:

Երկուշաբթի առաւօտից մինչև երեկոյ շարունակւում են կոտորածը, կողոպուտը, հալածանքը: Սկսւում են հրդեհներ: Քաղաքի կենտրոնում այրւում են «Փանտագիա» բաղնիսը և շատ խանութներ ու տներ:

Ինչ է անում ոստիկանութիւնը: Ոչինչ: Նա անգոր է հէնց առաջին օրից: Պատմում են, որ հէնց առաջին օրից շատ ոստիկաններ նկատուել են առանց սովորական ռեւօլվերներէ: Իսկ ինչ է անում ուսաց քաջ զօրքը, հարիւրաւոր կօզակները և հազարաւոր հետեակ զօրքը: Նա լուռ, անգործ և անտարբեր ակնատես է կանանց և երեխաների սրախողխոխ լինելուն, տների այրուելուն, ծերերի աղերսանքին: Որովհետեւ զօրքը պաշտօնական հրաման չունի խուժանի կատաղութեանը գէնքով դիմադրելու: Նահանգապետ իշխ. Նակաշիձէն մի խումբ կօզակների օգնութեամբ դպրոցներից աշակերտներին ուղեկցում է իրանց տները: Բայց ոչ ամենքին, որովհետեւ ժամանակ չը կայ... Մեծամասնութիւնը մնում է դպրոցներում, շատերը երեք օր մինչև կոտորածի վերջը:

Բալախանից մի խումբ հայ բանւորներ զինուած գալիս են իրանց ցեղակիցներին օգնելու: Զօրքը կտրում է ճանապարհը ե թոյլ չի տալիս նրանց քաղաք մտնելու: Այն ինչ թուրքերն անարգել մտնում են քաղաք իրանց ցեղակիցների գաղանութիւններն աւելի սաստկացնելու համար: Ինչհիւ:

Գիշերն անցնում է համեմատաբար խաղաղ: Բայց այդ ինչ խաղաղութիւն է: Ամբողջ քաղաքը սգի մէջ է: Քանիքանի ընտանիքներ արդէն կորցրել են իրանց կերակրողներին, քանի մայրեր զրկուել են զաւակներից, քանիսի վիճակը դեռ անորոշ է: Մի մայր կորցրել է բոլոր զաւակներին և խելագարուած ընկել փողոցները: Գազանների գնդակը թաւալում է նրան գետին: Մի պատանու մօրն ու քրոջը մերկացրել են և ստիպել փողոցում պարել և պարելու միջոցին նրանց մարմինները ծակծակոտել դաշոյններով մինչև մահ: Պատանին սարսափից և վշտից խելագարուել է: Նա վազելով փողոցներում, գոռում է. «վրէժ, վրէժ, ես ոչոքից չեմ վախենում, ես վրէժ կառնեմ, ես ուռմբ ունիմ»: Եւ գրպանից հանելով մի փորթուզալ, ցոյց է տալիս անցորդներին: Միւս օրը նա փախչում է Բազուից Թիֆլիս: Կսկծալի տեսարան, որի առջև աղօտանում է Հուգենոսների աղէտը:

Մեր ձեռները կաշկանդւում են, անկարող ենք մի առ մի նկարագրել բոլոր տեսարանները: Հայ թղթակիցները հաւատացնում են, թէ մի հրէայ փողոցում տեսնում է մահի կլտոր: Մօտենում է և ինչպէս չէ՞ այդ մի կնոջ ծիծ: Մի ուրիշ ակնատես նկարագրում է մի յղի կնոջ, որի արգանդը դաշոյնով պատուել

են գազանները և հրեխային հանել սրի ծայրով, դէն ձգել: Եւ մենք ապրում ենք քսաներորդ դարում, քաղաքակրթութեան պետութեան հովանաւորութեան տակ, և այդ բոլորը կատարւում է մի մեծ նահանգական արդիւնաբեր հարուստ քաղաքում, ոստիկանութեան և հարիւրաւոր ու հազարաւոր զինուորների աչքերի առջև:

Ահա ինչպէս են նկարագրում ականատեսները երկու հարուստ հայ ընտանիքների կործանումը — Բալա-Բէգ Լալայեանի և Ալեքսանդր Ադամեանի:

Բալա-Բէգ Լալայեանը իւր եղբոր, կնոջ և փոքրիկ դասակների հետ կենում էր քաղաքի «Շամախինկա» թաղում: Թուրքերը յարձակում են նրա տան վրայ: Նա դիմում է հեռախօսով նահանգապետին և ոստիկանապետին: Օգնութիւն չը կայ: Դիմում է հեռախօսով իր ծերունի հօրեղբորը, որ կենում է քաղաքի միւս ծայրում: Ծերունի Կարապետ Լալայեանը դիմում է նահանգապետին: Իշխ. Նակաշիձէն հաւատացնում է, թէ ոչինչ չի պատահիլ, թող հանգիստ լինի: Մինչդեռ 20 զինուած թուրքեր դալիս են պ. Կարապետի մօտ և առաջարկում իրանց օգնութիւնը: Երևի շամախեցի թուրքեր, որոնք յայտնի են իրանց մարդասիրութեամբ: Պ. Կարապետը յոյսը դնում է նահանգապետի վրայ, որ յայտնում է հեռախօսով, թէ գնում է նրա եղբոր որդուն փրկելու:

Այստեղից արդէն պատմում է Բալա-Բէգի ոռն աղախիւնը: Եւ ահա ինչպէս:

Եւր Բալա-Բէգը լսում է թէ նահանգապետը եկաւ կօզակներով, ուրախացած դուրս է վազում: Այդ ժամանակ տունն արդէն պաշարուած է լինում թուրքերից և հրդեհուած:

— Օգնեցէք, Ձերդ Պայծառափայլութիւն, — աղաղակում է նա:

Չարամիտները իշխ. Նահանգապետին յայտնած են լինում, թէ իբր Բալա-Բէգ Լալայեանի տանը գտնուում է զէնքերի մեծ պաշար, թէ նրա դռներից և կտուրից հրացան են արձակել: Լալայեանը հերքում է և խնդրում է խուզարկել իր տունը:

Խուզարկում են, և ոչ մի ատրճանակ, ոչ մի ուրիշ զէնք: Իշխ. նահանգապետը հանգստացած հեռանում է... Կօզակները մնում են: Թուրքերը մտնում են տան բազը: Լալայեանը իր կնոջ և եղբոր հետ փակւում է տան ներքնայարկում: Թուրքերը բազում հանդիպում են դռնապան հային և մի ուրիշ հայի, հարցնում են ուր է թաղնուել Բալա-Բէգը: Հայերը չեն ասում

և տեղնուտեղը գնդակահար լինում ու մեռնում: Թուրք ծառանքոյց է տալիս պատսպարուածներէ տեղը:

Գաղանները չեն համարձակուած երկիւղից ներս մտնել: — Դուրս եկ, Բալա-Բէգ, — գոռում են նրանք, — մենք եկել ենք քեզ ազատելու:

Լալայեանը, հաւատալով նրանց, դուրս է գալիս իր կնոջ և եղբօր հետ. Բալա-Բէգը Թուրքերին առաջարկում է իր քովը դառնուած 10000 ռուբ. և խոստանում է վաղը տալ մի այդքան էլ, միայն թէ ձեռք չը տան իր ընտանիքին և իրան: Թուրքերը փողերը խլում են, Լալայեանին իր կնոջ և եղբօր հետ քաշում են փողոց և այնտեղ, կոզակների ներկայութեամբ, սպանում:

Այդ միջոցին անձնուէր ռուս աղախներ, մի ռուս ընտանիքի օգնութեամբ, Լալայեանի զաւակներին ազատելով, փախցնում է:

Այսպիսի անձնուէր ռուս կանայք շատ են եղել Բագուի աղէտալի օրերին: Նրանք պատիւ են բերում իրանց ազգին և արժանի են անմահութեան: Քանի քանի ընտանիքներ, ընդհանուրի վկայութեամբ, փրկուել են կոտորածից և սովից նրանց շնորհով: Հայը երբէք չի մոռանալ այդ հերոսուհիներէ կրախտիբը:

Կից այդպիսի անձնուէր ռուս կանանց՝ մեզ համար ամօթալի է յիշել և՛ այնպիսիներին, որոնք, ընդհակառակը, հայերի թշուառութիւնը իրանց եղկելի նիւթամուլութեամբ շահագործել են: Ահա ինչ է ասում «Մշակ» լրագրի Բագուի թղթակիցներէ մէկը, որը դէպքին ականատես է եղել:

«Մինչդեռ խուժանի մի մասը զբաղուած էր սպանութիւններով, միւսը թալանում էր բնակարանները: Սրանց հետ էին միացել եւ մի քանի ռուս կանայք, որոնք քրիստոնէական եղբայրութիւնը մոռացած, թշուառութիւնից էին աշխատում օգտուել: Թալանում էին մինչև վերջին կտորը»:

Մի ռուս աղախին սպանւում է Թուրքերի պատահական գնդակից այն պահին, երբ մի հայի կողոպտուած խանութից երկու շիշ օղի տուն տանելիս է լինում:

Տեսէք, միևնոյն ցեղն ու շրջանը որպիսի միմեանց հակառակ հոգիներ է արտադրում:

Բայց շարունակենք մեր ողբերգը:

Աւելի սոսկալի է Ա. Ադամեանի մահը: Ահա ականատեսներն իսուքները, որ առաջ ենք բերում մասամբ լրագիրներէից և մասամբ մեր լսածներէից:

Այլ. Ադամեանը կենում էր իւր ընտանիքով քաղաքի կենտրոնում հայոց եկեղեցուց ոչ այնքան հեռու մի երկյարկանի տանը: Կոտորածի երկրորդ օրը նրա երկու որդիները լինում են գիմնադիւայում, իսկ տանը ինքը, իւր գեղեցկուհի կինը և 13 տարեկան որդին:

Ադամեանը յայտնի էր իբրեւ անվախ որսորդ և անվրէպ հրացանաձիգ, նոյնպէս և՛ նրա 13 տարեկան որդին: Փակուած տան վերին յարկում, նա մի անգամ հետաքրքրուած բաց է անում լուսամտի փեղկը և տեսնում է, որ թուրքերի մի անազին խումբ դիմացի տնից դուրս է ձգել մի հայ կնոջ դիակը և մի գեղեցիկ հայ օրիորդի (Ասլանեան) առևանգած տանում են:

Քաջի սիրտը չի դիմանում վայրենի տեսարանին: Նա հրամայում է որդուն բերել իւր հրացանները, և հայր ու որդի սկսում են հրացանաձգութիւն: Թուրքերը սարսափած տեսնում են, որ մէկը միւսի ետեւից գետինն են թաւալում իրանց ընկերները: Յարձակում են Ադամեանի ընտանեացի վրայ: Դռներն ամուր են: Սկսում են ատրճանակներ արձակել: Բայց քաջ հայը անվրդով շարունակում է մէկը միւսի ետեւից գետինը թաւալել թուրքերին: Հաւատացնում են, որ նրա և որդու շատ քիչ գնդակներ են վրիպում: Կարճ ժամանակուայ մէջ նրանք սպանում են ոմանց ասելով 20, իսկ շատերի հաւատացնելով մօտ 30 թուրք:

Ուռժանը յուսահատ և կատաղած, դիմում է մի տմարդի միջոցի: Նա հարեան թուրք խանութից թաւալելով բերում է մի տակառ նաւթ և տան դռների առջև այրում: Տունը հրկիզւում է: Դռները խորտակւում են: Թուրքերը ներս են խուժում: Սպանում են, ուս հանդիպում են, ի միջի այլոց, և՛ մի պատանի գիմնադիւստի, որ թաքնուած է լինում բազմի մի անկիւնում: Հրդեհը սաստկանում է: Թուրքերը փողոց են վազում: Սկսւում է տան կողոպուտը: Հրոսակների խումբը բաժանում է իւր մէջ Ադամեանի և նրա հարեանների կահ-կարասին, դիւային բլրքիջներ արձակելով:

Իսկ տունը այրւում է: Այրւում են նրա բոլոր հայ ընակիցները, որովհետեւ թուրքերը թոյլ են տալիս ոռաններին և միւս այլազգիներին ապահով դուրս փախել:

Այդ տանն է նաև փաստաբան Թադէոսեանը իւր վերին

աստիճանի համակրելի կնոջ, քենու—օր. Մարուսեանի և երկու փոքրիկ զաւակները—ծծկեր որդու և 1½ տարեկան էվելինա աղջկայ հետ:

Այդ չարաբաղդ տան մէջ այրւում են 17 հոգի: Պատմում են ականատեսները, որ երբ թշուառները ազգականները աւերակների մէջ փնտրում էին դիակները, տեսան միայն մի քանի մոխրակոյտեր առանձին-առանձին: Ենթադրւում է, որ իւրաքանչիւր ընտանիք գրկուած է այրուել: Ալէքսանդր Ադամեանի, նրա ամուսնու Մարիայի և որդու Նիկօլայի սևացած ոսկորները ամուր գրկուած են գտել աւերակների մէջ: Գերեզմանին յանձնուել են մոխիր և սև ոսկորներ:

Կոտորածի միայն չորրորդ օրը մի խումբ զինուած քաջ հայ երիտասարդների յաջողւում է Բալասանուց քաղաք մտնել: Խնչ կարող էին անել մի բուռն մարդիկ հազարաւոր և տասնեակ հազարաւոր խուժանի դէմ: Բայց և այնպէս, ականատեսները հրաջքներ են պատմում այդ քաջերի մասին: Առաջին թափով նրանք կոտորում են մի քանի տասնեակ թուրքեր և սարսափ ձգում նրանց մէջ: Նրանց ոչ մի գնդակը, ոչ մի դաշոյնի հարուածը չի վրիպում, մինչդեռ շուարուած թուրքերի քսան հարուածից հազիւ մէկն է հասնում նպատակին: Կտրիչների խումբը արագութեամբ գրաւում է քաղաքի կենտրոնական փողոցները և պահակների խմբեր դնում անկիւններում: Օգնութեան են հասնում տներում փակուած սովատանջ ընտանիքներին, հաց մատակարարում, ուղեկցում են ցանկացողներին դէպի երկաթուղու կայարանը, միջոց տալով նրանց դժողքից փախչելու: Քիչ չի եղել կտրիչների թիւը, բայց նրանց մի չնչին մասն է գէնք ունեցել: Մինչդեռ գրեթէ ամեն թուրք զինուած է եղել նորագոյն սիստեմի և նոր ռեվօլվերով, իսկ շատերը «բերդանկաներով»:

Երևի, գաղտնիքը կը պարզուի մի օր, թէ որտեղից և ումից են ձեռք բերել նրանք այդ արգելուած զէնքերը: Բոլոր ականատեսները միաբերան հաստատում են, որ գոնէ առաջին երկու օրը կոտորածի՝ ոստիկանները աշխատել են հայերին զինաթափ անել, իսկ թուրքերին անխռով թողել են կրել նոյն իսկ պետական սիստեմի հրացաններ:

Ինչպէս երկիւղից, թէ՞ մի ուրիշ անբացատրելի հանգամանքից դրդուած: Հասարակութիւնը, առանց ազգերի խտրութեան, այժմ ամեն ջանք գործ է դնում, որ այս գաղտնիքը լուսարանուի: Բազուի նահանգական դատարանի դատաւրաղը դի-

մեկ է լրագրները խմբագրութիւններին, որ իրան ներկայացնեն այն բոլոր գրաւոր տեղեկութիւնները, որոնք «այս կամ պատճառով չեն կարող տպագրուել»։ Նա ազդարարում է, թէ անկողմնապահ քննութեան համար պիտի հարց ու փորձ անի բոլոր ականատեսներին։

Հարկաւ, այս կըլինի միայն սկզբնական քննութիւն, ապա կըսկսուի իսկական և աւելի բարձր մի պաշտօնական մարմնի միջոցով։ Խնդիր է յարուցուած, որ քննիչ մասնաժողովը նշանակուի բարձրագոյն իշխանութիւնից Պետերբուրգում, *) որ քննութեանը մասնակցեն քաղաքային խորհրդի, մամուլի և թուրք ու հայ հասարակութեան ընտիր ներկայացուցիչներ։

Այսպիսով միայն խնդիրը կը պարզուի, վարագոյրները կը բացուին, եղելութեան պատճառները կը բացատրուին և հասարակական ակէկոծուած կարծիքը գոհացում կըստանայ։

Կօզակները օգնել են թշուառներին... Տասնեակ անձինք պատմեցին լրագրներում իրանց փախուստը Բագուից կօզակների օգնութեամբ։ Նրանք փախչողներից վերցրել են քաղաքից մինչև երկաթուղու կայարանը ուղեկցելու համար 10-ից սկսած մինչև 300 ռուբլի, նայելով փախչողների միջոցներին։

Կեանքը անգնահատելի է և խեղճ ծնողները չեն խնայել վերջին կոպէկներն իրանց զաւակներին փրկելու համար։ Նոյն են մարդիկ, որ կայարան հասնելով դատարկել են իրանց գրպանները և մուրացկանութեամբ թիֆլիս հասել։ Այրուած տներ, խորտակուած կահ կարասիք, կողոպտուած խանութներ, ամեն ինչ նսեմացել է կեանքի փրկութեան առջև։ Մայրերը յանուն զաւակների համբուրել են այն փրկիչ ձեռները, որոնք թշուառներից ստացած վարձը տարել են գրպանները հանգիստ խղճով։

Իսկ ի՞նչ են արել խեղճերը։ Նրանք ոչինչ չունէին արիւն նագին վճարելու։ Ունևոր փրկուածները այսօր ցրուել են զանազան ապահով տեղեր իրանց տանջուած նեարդերը ամոքելու համար։ Այն ինչ՝ չունևորները մնացել են դժոգքի սոսկալի տեսարանների առջև իրանց տանջուած սրտերի վերջին ոյժը սպառելու համար։ Եւ քանի քանիսը, որ փրկուած են սրից ու գնդակից, պիտի հիւանդանան հոգեպէս։ Արդէն ասում են, թէ մի քանի դժբաղդ ականատեսներ խելագարուել են։ Հարկաւ, մենք չենք դատապարտում ունևորների փա-

*) Արդէն սենատոր Կուզմինսկիլ նշանակուած է քննիչ։

խուսար: Բայց ի՞նչ անեն նրանք, որոնք միջոց չունին փախչելու: Պէտք է վերադառնալ և շուտով նրանց օգնել: Մայրեր կան, որոնք կորցրել են իրանց զաւակները մի մասը և այժմ սարսափով են մտածում կենդանի մնացածների մասին: Ի՞նչ կը լինի նրանց վիճակը, եթէ օգնել կարողացողները փախչեն և փախչեն անդարձ...

Մենք փախչողներին չենք դատապարտում, բայց գովում ենք մնացողներին: Թուրքերն էլ պակաս զոհեր չեն ունեցել: Ինչո՞ւ նրանք չեն փախչում: Եւ միթէ՞ կեանքը այժմ էլ է ապահով, երբ գործերի գլուխ է կանգնած գնեթալ-նահանգագետի լիազօր իրաւունքներով մի այնպիսի խաղաղ և բարեխիղճ քրիստոնեայ, որպիսին է Իշխ. Ամիրախօրին: Պէտք է յուսալ, որ աղէտալի օրերը չեն կրկնուիլ Բագում և պէտք է վերադառնալ ապարդիւններին օգնելու համար: Փոթորիկն անցել է, պէտք է մտածել նրա հետևանքների մասին:

Բագուի դժոխային օրերին մեզ զբաղեցնում էր և՛ մի հարց: Ի՞նչ է անում տեղական քաղաքային խորհուրդը և քաղաքագլուխը: Աւանդ, մենք խօսքեր չենք գտնում Բագուի «ընտրեալների» քստմենի վախկոտութիւնը և անտարբերութիւնը շէտելու համար: Քաղաքային Վարչութեան ծառայողները միաբերան վկայում են քաղաքագլուխ պ. Իրեցկու դատապարտելի արարքը: Այն պահին, երբ կոտորածը սկսել է սաստկանալ, նա փակուած է եղել Վարչութեան մէջ, և ոչ մի միջոց կոտորածի առաջն առնելու, բացի տեղեֆօնից: Ծառայողները զանգատում են, որ նա ստիպել է նրանց հեռանալ իրանց տները: Հայ ծառայողները ընդամացել են, բնականաբար գուշակելով, որ փողոց դուրս գալ, կը նշանակէ կատաղի թուրք խուժանից սրախողխող լինել: Պ. Իրեցկին սխրագործութիւն է ունեցել պնդելու իր պահանջը: Եւ ոմանք հարկադրուած կատարել են իշխանաւորի պահանջը: Մենք դեռ տեղեկութիւն չունենք, նրանք ապահով հասէ՞լ են իրանց տները, թէ ոչ: Կարճանագրենք, երբ կիմանանք ճշմարտութիւնը:

Ահա մի ներկայացուցիչ, որ հասարակութեան փողերով է վարում իւր... գոյութիւնը, որ այսուհետեւ կը համարուի քստմենի:

Պակաս դատապարտելի չէ քաղաքային իրաւասունների անտարբերութիւնը, որոնց մէջ կան շատ ազդեցիկ հայեր և թուրքեր: Անձինք, որոնք կարող էին կոտորածի առաջն առնել, ինչո՞ւ հէնց առաջին օրը նրանք չունեցան արտաքոյ

կարգի նիստ, չը խորհրդակցեցին աղէտը սկզբից և եթ ոչնչացնելու: Զէր յաջողուի Փոյթ չէ: Գոնէ փորձէին: Չեն փորձել անգամ և ահա այսօր ընկնում է նրանց կազմի վրայ մի անջնջելի արատ:

Մի փաստ, որ ցոյց է տալիս, թէ երբեմն անհատի քաջութիւնը ինչեր կարող է անել: Մեզ պատմեցին, որ կոտորածի միջոցին մի ամբողջ հայ փողոց սարսափի մէջ է լինում և սրտատրոփ սպասում է իւր հերթին: Մի քաջասիրտ երիտասարդ, անզէն լինելով, կատաղութիւնից կրծոտում է մատնեբը: Նա մի խանութից խլում է մի մեծ եղջիւր: Այդ միջոցին զինուած թուրքերն արդէն մտած են լինում հայերի փողոցը իրանց քստմնելի գործը շարունակելու համար: Երիտասարդին եղջիւրի հարուածով յաջողւում է առաջին պատահած թուրքին գետինը գլորել: Նա խլում է նրանից հրացանը և փամփուշտները և սկսում է դիմադրել խուժանին: Նա սպանում է մի քանիսին, վիրաւորում է մի քանիսին: Խուժանը ցրւում է, փողոցի բնակիչներն ազատւում են կորստից: Եւ այժմ նրանք հերոսացնում են իրանց փրկողին:

Այդպիսի փաստեր մեզ պատմեցին մի շարք: Եւ այդ փաստերի մէջ մխիթարականն այն է գլխաւորապէս, որ անձնութիւնը ազատել է շատ թշուառների: Հայը քաջ է, ասում են: Ուզում ենք հաւատալ այս բանին: Բայց ինչու միշտ մի որևէ «եթէ» խանգարում է նրան իւր քաջութիւնն արտայայտելու «գործով»: Հայը ատում է զէնքը: Այս ատելութիւնը մի երկսայրի սուր է մեզ համար: Քրիստոնէական քաղաքակրթութիւնը հակառակ է զէնք գործածելուն: Արդեօք, հայի խաղասիրութիւնն այս բարձրագոյն զգացումից է առաջանում, թէ ունի ուրիշ, մեր ինքնասիրութեան համար վիրաւորական պատճառներ...

Գերմանացին և անգլիացին մեզնից պակաս քրիստոնեայ չեն, և բիւր անգամ մեզնից աւելի քաղաքակիրթ: Ինչու նրանց կեանքը ապահով է Աֆրիկայի և Խորին Ասիայի ամենավայրենի վայրերում, իսկ մերը ամենուրեք անապահով, խեղճ, ընկճուած: Որովհետեւ լուսաւոր եւրոպացու բարոյական օրէնքների կօդեկար չի հերքում զէնքի գործածութիւնը այնտեղ, ուր հարկաւոր է: Խեղճութիւնը չը պիտի համարել քաղաքակրթութիւն: Զէնք գործածելը, նոյն իսկ զէնք ունենալը բարձրագոյն քրիստոնէական գաղափարի տեսակէտից պարսաւելի է: Բայց Աւետարանի մարդասիրական խօսքերը նոյն իսկ քրիստոնեայ

մարդկութեան ահագին մեծամասնութեան համար մեռած տառեր են:

Բացառութիւն ենք ուզում կազմել թող այդպէս լինի: Միայն դէն ձգենք մեղանից այն արժանաւորութիւնը, որին արուեստականօրէն և անբնական ուզում ենք տիրանալ: Մենք խաղաղ ժողովուրդ համարենք մեզ և չը խօսենք այն յատկութեան մասին, որ չունենք և չենք ունեցել երբէք քաջութիւն:

«Եթէ այս հանգամանքը չը լինէր, այս կանէինք, այն կանէինք,»—լսում ենք հայի բերանից միշտ: Այս մեր հաղաւոր տարիների պատմութեան մէջ սրբագործուած մի դարձուած է, որ այսօր դարձեալ հնչում է հայկական բոլոր գլխաւոր, բոլոր ընկճուած շրջաններում: Սոսկալի թիւրիմացութիւն, որ չի թոյլ տալիս մեզ մի անգամ ընդ միշտ ընդունելու այն անհերքելի ճշմարտութիւնը, թէ հայը եթէ գիտէ պաշտպանուել վտանգներից, եթէ քաջ է միայն իբրև անհատ, իսկ իբրև խմբական ոյժ... տկար է, ողորմելի...

Այն բոլորից, երբ Բագուի սոսկալի աղէտի լուրը հաստատուեց Թիֆլիսում և ստուգուեց, որ այդ մի հասարակ կռիւ չէ, երբ տեղական լրագրների մէջ տպուեցին առաջին կցկտուր տեղեկութիւնները բռնկուեց ամբողջ ազգաբնակչութիւնն, առանց ազգերի խտրութեան: Բացի այն քստմնելի տարրերից, որոնց համար ամեն մի խլրտում հաճելի է և ձեռնտու, ամենքը յուզուեցին և վրդովուեցին:

Բողոքի առաջին ձայնը տուեց Թիֆլիսի համակրելի քաղաքագլուխ պ. Դրիստափոր Վերմիշեանը: Մի անձնաւորութիւն, որ դեռ քաղաքագլուխ ընտրուելուց շատ առաջ յայտնի էր իւր մաքուր հասարակական ձգտումներով իբրև գործիչ, իբրև գրչի մարդ և հոռտոր:

Պ. Վերմիշեանը հեռագրով դիմեց Բագուի յայտնի թուրքերին—Հաջի-Չէյնալ-Աբդին Թաղիեվին, «Kacni» լրագրի խմբագիր Ալի Մարդան Բէգ Թօփչիբաշեվին, հրապարակախօս Աղանկին, Հասան-Բէգ Մէլիքօվին, ազդեցիկ Աշուրօվին, Հաջիեվին և այլոց, խնդրելով սրանց, որ շտապեն ազդել իրանց կրօնակիցների վրայ՝ վերջ տալու ամօթաբեր շարժմանը: Միևնոյն ժամանակ, պ. Վերմիշեանը դիմեց Կովկասի կառավարչապետի պաշտօնակատար գեներալ-ադիւտանտ Մալամային, խնդրելով, որ նա շուտով միջոցների ձեռնարկի կոտորածի առաջն առնելու:

Նոյնպիսի գործունէութիւն ցոյց տուեց և՛ Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեորգի Գաբելին եպիսկոպոս Սաթունեանը։ Նա, պիերմիշեանի աջակցութեամբ խնդրեց գինեբաւ Մալամալին անմիջապէս Բագու ուղարկել շիա թուրքերի Անդրկովկասեան հոգևոր պետ Շէյխ-Ուլ-Իսլամին։ Երեքշաբթի, փետրուարի 8-ին, այսինքն կոտորածի երրորդ օրը, Շէյխ-Ուլ-Իսլամը ուղևորուեց Բագու։

Մինչոյն ժամանակ, Թիֆլիսի հայ ինտելլիգենցիան և հասարակութեան ներկայացուցիչները զանազան տեղերում ունեցան ժողովներ և խորհրդակցեցին կոտորածի առաջն առնելու։

Քաղաքագլխին օգնութեան հասաւ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանն իւր ամբողջ կազմով։ Նդան արտաքոյ կարգի նիստեր այնքան բազմամարդ, որ երբէք Թիֆլիսը չէր տեսել։ Նդան ժողովներ և՛ Սրբազան առաջնորդի մօտ և՛ այդ ժողովներից մէկում ընտրուեց 12 հոգուց բաղկացած մի մասնաժողով սրբազանի նախագահութեամբ՝ Բագու փաստուած հայերին նիւթական օգնութիւն հասցնելու համար։

Չորեքշաբթի, 9-ին փետրուարի երեկոյեան ստացուեց հետեւեալ հեռագիրը Առաջնորդի, քաղաքագլխի և մեր աշխատակից Շիրվանզադէի անունով.

«Ի բաղդաւորութիւն հայերի և միսուլմանների, խորը վշտալի կոտորածը այսօր դադարեց։ Հանդիսաւոր թափօրը, առաջնորդութեամբ տեղւոյ ժամանած Շէյխ-Ուլ-Իսլամի և հայ հոգեւորականութեան, անցաւ փողոցներով, հրաւիրելով ամենքին դէպի խաղաղութիւն, հանգստութիւն և դարձ դէպի առօրեայ դադմունքներ։ Տեղի ունեցաւ կատարեալ հաշտութիւն թուրքերի և հայերի մէջ։ Յայտնեցէք այս մասին Թիֆլիսի ազգաբնակչութեանը։

Շէյխ-Ուլ-Իսլամ և Թաղիեւի

Ուրախալի հեռագիրը հետեւեալ օրը տպուեց Թիֆլիսի լրագիրներում և հասարակութեան ալեկոծուած մտքերի վրայ ունեցաւ խաղաղեցուցիչ ազդեցութիւն։

Նոյն քովանդակութեամբ հեռագիր ստացաւ խմբագրութիւնս և Բագուի մի գործարանատէր Մանուէլեանից։

Այնուհետեւ հասարակութիւնը սկսեց զբաղուիլ թշուառութեան հիմնական պատճառները պարզելով խնդրով։ Այս խնդիրը ի պատիւ իւր ազգի, առաջին անգամ ասպարէզ դրեց «Нов Обоз.» լրագրում մի ոռւս, պ. Կրուչինսկին, ամենից առաջ իր լուսանալով յօգուտ փաստուածների։

Շաբաթ փետրուարի 12-ին, Թիֆլիսի միջնակարգ դպրոց—

ների հայ աշակերտների ցանկութեամբ, Վանքի մայր եկեղեցում կատարուեց հանդիսաւոր հոգեհանգիստ: Հետեւեալ օրը կատարուեց հասարակութեան ցանկութեամբ, իսկ երրորդ օրը վրացիների առաջարկութեամբ:

Այդ երեք օրը Վանքի Տաճարը ներկայացնում էր արտաքոյ կարգի տեսարան: Քսանից մինչև երեսուն հազար ժողովուրդ բռնել էր տաճարը, ընդարձակ գաւիթը և շրջակայ փողոցները: Բոլոր հոգեհանգիստներին ներկայ էին շիա և սիւնի դաւանութիւնների միսիւլման հոգեւորականութեան ներկայացուցիչներ, իսկ երրորդ հոգեհանգստին նաև վրաց հոգեւորականութիւնը:

Վեհափառ Հայրապետը Թիֆլիս ժամանեց կիրակի փետրուարի 13-ին և երկրորդ ու երրորդ հոգեհանգիստներին ներկայ եղաւ, չը նայելով իւր ծանր հիւանդութեանը:

Կառավարչապետի բարեսիրտ պաշտօնակատար գեներալ Մալաման, պ. Վերմիշեանի երաշխաւորութեամբ, թէ կարգը չի խանգարուիլ, պատուիրել էր, որ ոստիկանութիւնը ներկայ չը լինի հանդէսներին: Եւ կարգապահութիւնը օրինակելի էր այդ երեք օրը: Բոլոր ազգութիւններից և դասակարգերից բաղկացած ահաբէն բազմութիւնը այդ օրերը ցոյց տուեց չը տեսնուած և չը լսուած օրինակ: Ո՞վ կարող էր երևակայել այդպիսի խաղաղ, վեհ և խորհրդաւոր տեսարան «վայրենի» համարուած Կովկասում: Տեսարանները խրատական էին ամենից առաջ այն տարրի համար, որ ինքը լինելով վայրենի, մեզ է համարում վայրենի:

Պատարագից յետոյ հոգեւորականութիւնը դուրս եկաւ Վանքի գաւիթը: Այդ միջոցին առաջորդարանի դռների առջև երեւաց Վեհափառը կորամէջ, ընկճուած: Նա շրջապատուեց միսիւլման հոգեւորականութեան պատկառելի ներկայացուցիչներով: Ամբոխի մարմնով անցաւ սարսուռ: Տիրեց սրբազան լուծութիւն, չը նայելով ընդհանուր վշտին ու վրդովմանը: Իսկ պարզ, երկնքից անտարբեր արեգակը սփռել էր իւր ջերմ ճառագայթները պատմական տեսարանի վրայ: Տառնեալ հազարաւոր ամխի հայեացքը ուղղուած էր դէպի ալեզարդ Վեհափառը և նրա շուրջը հաւաքուած նոյնպէս ալեզարդ միսիւլման հոգեւորականները: Պարզ էր, որ Բագուի աղէտը համահաւասար վշտացրել է ամենքին: Կիրակուայ հոգեհանգստից յետոյ Անդրկովկասեան Մուֆթին այս խօսքերը մօտաւորապէս արտասանեց.

«Մենք ամենքս եղբայրներ ենք, ամենքիս նախնական ծնողներն են Ադամն և Նան: Ինչո՞ւ ենք կոտորում միմեանց:

Եթէ այսօր մենք դաւանում ենք զանազան կրօններ, միթէ այդ նշանակում է, որ մենք բաժանուած ենք միանգամայն, որ մենք թշնամիներ ենք: Ինչպէս մեր հայրերն ու նախահայրերն են ապրել հաշտ և բարեկամաբար, նոյնպէս պարտաւոր ենք ապրել և մենք: Քսան և երկու տարի է ես ապրում եմ հայերի մէջ և ոչ մի վատ բան նրանցից չեմ տեսել, ինչպէս մեզանից ևս հայերը վատ բան չեն տեսել: Մենք թշնամիներ չենք, բայց ունենք մի ընդհանուր թշնամի: Այդ թշնամին շէյթանն է: Եւ մենք պէտք է զինուենք նրա դէմ միայն, որպէս զի ընդհանուր ոյժերով կործանենք նրան և ոչ թէ եղբայրասպան կոիւ մղենք: Միանանք ուրեմն եղբայրական կապերով, օգնենք միմեանց, լինենք միմեանց պատուար:»

Պարզ և անպաճոյճ խօսքերով արտասանուած ճառը ամբողջ վրայ գործեց խոր տպաւորութիւն: Հազարաւոր ձայներ աղաղակեցին. «Ժիշտ է, ճիշտ է, կեցցէ մուֆթին»:

Նոյն ուղղութեամբ և ազդու խօսեց Շէյխ-Ուլ-Իսլամի բացակայութեամբ նրա պաշտօնակատար Սօլթան Հոսէյին-Բէկովը: Երբ նա գոչեց. «հանգիստ ոսկերացն նահատակ հայերի և միսուլմանների», ամբոխը աղաղակեց միաձայն. «Ամէն»: Երբ նա գոչեց. «Ձը լսենք Շէյթանին», ամբոխը աղաղակեց միաձայն. «Ձենք լսիլ»: Տայ Աստուած, որ չը լսենք:

Նորին Վեհափառութիւնը ոյժ չունէր խօսելու: Մի կողմից հիւանդութիւնը, միւս կողմից անապելի վիրտը նրան բոլորովին ընկճել էին: Նա կարճ խօսքերով յայտնեց իւր շնորհակալութիւնը միսուլման հոգեւորականներին և դառնալով ամբողջին, օրհնեց և սասց. «Թող այս վերջին հոգեհանգիստը լինի հայ ժողովրդի համար»:

Երբ երգեցիկ խումբը սկսեց երգել «Հայր մեր»ը, ամբոխը, կարծես, դիւթական աներևոյթ ուժով, չոքեց միահամուտ:

Աւելի հանդիսաւոր և բազմամարդ էր վրացի աշակերտների ցանկութեամբ կատարուած հոգեհանգիստը: Նոյն ոգևորութիւնը, նոյն տեսարանը, նոյն իրէպալական կարգապահութիւնը: Վրացիները արտասանեցին մի շարք զգացուած ճառեր, որոնք ընդունուեցին բուն ծափահարութիւններով: Հայերը շնորհակալութիւն յայտնեցին մի նոյնչափ զգացուած ճառով:

Հանդէսը վերջանալուց յետոյ, հայ և վրացի աշակերտները դիմեցին դէպի մահմեդականների մէջիթը: Ճանապարհին

բոլոր թուրքերը և հայերը, ի պատիւ հանդիսի, կողպեցին իրանց խանութները և հետևեցին նրանց: Մէջիթը, հարկաւ, չէր կարող տեղաւորել այդ երեսուն հազարի չափ ամբոխը: Հոգևորականների առաջնորդութեամբ նա դիմեց դէպի մահմեդականների գերեզմանատուն: Եւ այստեղ կատարուեց հոգեհանգիստ Բագոււմ կոտորուած թուրքերի համար:

Այստեղ ևս Շէյխ-Ուլ-Իսլամի պաշտօնակատար մօլլա-Սուլթան-Հուսէին-Բէկօվը արտասանեց ճառ: Նա, ի միջի այլոց, ասաց.

«Այն չար ոգին, որ ներշնչեց միւսուլմաններին կատարել խայտառակ կոտորածը, թող այսուհետեւ լինի անիծուած: Մենք դարերով եղբայրներ ենք եղել և այսօր ցոյց տուեցինք այդ չար ոգուն, որ այսուհետեւ էլ կը մնանք եղբայրներ և որ ոչ մի դիւային ոյժ չի կարող մեզ անջատել: Նոյն ոգով խօսեցին և՛ հայերն ու վրացիները:

Եւ այդտեղ ժողովուած հայ, վրացի և թիւրք ամբոխը հանդիսաւոր երդում տուեց առ միշտ մնալ եղբայրներ և գործել յանուն երկրի ընդհանուր բարգաւաճման:

Նոյնպիսի խուռն ամբոխի ներկայութեամբ կատարուեց վրաց Քաշվէթի եկեղեցում նապատակների յիշատակին հոգեհանգիստ բոլոր աշակերտների և աշակերտուհիների ցանկութեամբ:

Որքան հանդիսաւոր, խորհրդաւոր և փառայեղ էին այդ տեսարանները, նոյնքան և՛ խրատական չարութիւն սերմանողների համար: Նրանք անհերքելի ապացոյցներ էին, թէ չը կայ Կովկասեան ազգութիւնների մէջ հիմնաւոր թշնամութիւն:

Այն մարդիկ, որ ճգնում են Բագուի դէպքը բացառել ազգայնական ատելութեամբ կամ միւսուլմանների ֆանատիկութեամբ, սոսկալի յանցանք են գործում ճշմարտութեան դէմ: Ոչ պակաս մոլորուում են և՛ նրանք, որոնք տնտեսական պայմաններին են վերագրում աղէտը: Ուր, ուր, Բագոււմ չըկայ տնտեսական ճնշում ոչ մի ազգութեան կողմից միւսի վրայ: Բագուի թուրքերը նոյնչափ, դուցէ՛ աւելի, ապահով են տնտեսապէս և առուտուրի մէջ, որքան և՛ հայերը, իսկ զուտ դրամազլխով նրանք սնհամեմատ հարուստ են հայերից:

Չարիքի պատճառները պէտք է հայերի և թուրքերի յարաբերութիւններից դուրս որոնել: Այս միայն մեր կարծիքը չէ, այլ և ամբողջ ուռա, հայ և վրացի մամուլի, այլ և բոլոր իսկապի միւսուլմանների, այլ և ուռա ինտելլիգենցիայի լաւա-

գոյն մասիւի Հետեւելով Բագուի դէպքերի առիթով Բագուում, Թիֆլիսում և ուրիշ շատ քաղաքներում եղած ժողովներում արտասանուած ճառերին, գալիս ենք միևնոյն կարծիքին: Ամենից որոշ և ամենից խիստ արտայայտեց այդ կարծիքը Բագուի փաստաբանների ժողովը, ուր ներկայ էին բոլոր ազգութիւնների անդամներ: Ոչ պակաս ոյժով շեշտեցին նոյնը թուրքերի, ռուսների և վրացիների ներկայացուցիչները պ. Վասիլիսի նախագահութեամբ կայացած ժողովում Բագուի հասարակական ժողովարանում:

Եւ փառք ու պատիւ այն արդարամիտ և ճշմարտասէր ռուսներին և վրացիներին, որոնք հայերից և թուրքերից առաջ են ասել և ապացուցել ճշմարիտ պատճառները Բագուի ամօթալի արիւնհեղութեան:

Կան երեւոյթներ, որոնց լուսաբանութիւնը ստեղծում է ամբողջ պատմութիւն: Բագուի աղէտը հայ ազգի դարերի ընթացքում կրած անթիւ տառապանքների համեմատ չնչին երեւոյթ է: Բայց նա խորհրդաւոր է իւր իմաստով: Նա պէտք է լոյս սփռի մարդկութեան մի նշանաւոր մասի ազգային պատմութեան վրայ և ապագայ փիլիսոփայի ձեռքը տայ անհերքելի փաստեր բռնութեան սոսկալի հետեւանքները արձանագրելու համար:

Տգիտութիւն, խաւար: Այո, նա էլ իւր բաժինն ունի և մեծ բաժին ներկայ աղէտի մէջ: Բայց ճիշդ է աւելի ցատմանիւ տգիտութիւնը, թէ՛ այն աներևոյթ ոյժը, որի ձեռքում այն խաղալիք է: Բնութեան և Աստծու սրբազան օրէնքներ է պղծում նա, որ խաւարը գործիք է դարձնում ժամանակաւոր յաջողութիւն ունենալու համար...

Հայ ժողովրդին մահ չի վիճակուած և ոչ թուրք ժողովրդին,—մենք հաւատում ենք այս բանին անխախտ: Գործիք լինել դիւային նպատակի համար, կարող է ամեն մի տկար ոյժ: Բայց այս չի նշանակում, թէ դիւային ոյժը պէտք է հասնի իւր նպատակին:

Ողբում ենք ոչ այնքան հայերի վիճակը, որքան այդ դիւային ոյժին, որ կոչուած է մեռեալին գերեզմանից յարութիւն տալու: Անիրազդեցիկ յոյս, որքան այն խեղաքարի ջանքը, որ ձգտում է արեգակը ձեռներով գրկել...

Թիֆլիսում հանգանակութիւն սկսուեց Բագուի աղէտից վնասուածների օգտին: Բոլոր լրագիրները բաց արին իրանց

դռները բարեգործների առջև: «Нов. Обоз.» մինչև այս տողերը, ժողովել է մօտ 7000 ու., «Մշակ»ը աւելի, «Тиф. Листокъ»-ը պակաս: Կեցցեն հասարակական կարծիքի ղեկավարները: Քաղաքային Վարչութիւնը ամենից բաղաւորն է այս կողմից: Ողոր նուիրատուութիւնները ուղղուած են քաղաքագլուխ պ. Վերմիշեանին, որ, հարկաւ, նուէրները կը բաժանի փաստաւորներն առանց ազգերի խտրութեան: Արդէն ժողոված է մօտ 15000 ուրբի: Բաւական գումար ժողովել է և այն մասնաժողովը, որ գործում է Սրբ. Առաջնորդի նախագահութեամբ, թէև մենք մի քիչ աւելի էինք սպասում նրանից...

Բազուն բոլոր բարեգործական հանգանակութիւնների ժամանակ առաջին դերն է ունեցել: Նա կատարեալ իրաւունք ունի ամբողջ Կովկասի, նոյն իսկ Ռուսիայի վրայ: Կովկասը տալիս է և՛ էլի կտայ: Ռուսիայից նպաստներ չը պիտի սպասել, ուստի ժողովուրդը իւր սեփական տառապանքներն ունի: Նա ժամանակ և ոյժ չունի մեր մասին մտածելու... Այո...

Բազուի քաղաքային խորհրդարանը յատկացրել է փաստաւորների օգտին 50000 ուրբի, իսկ նախարդիւնաբերների ժողովը 100000 ուրբի: Կը լինին և ուրիշ մասնաւոր նուէրներ: Բոլոր փաստաւորները կը ստանան նիւթական օժանդակութիւն: Բայց ինչո՞վ պէտք է փոխարինուի նրանց կորուստները, նրանց սպանուած քոյրերը, մայրերը, ամուսինները, զաւակները և ծնողները: Արդեօք, այդ մտքով, որ դրանք աւելամայ նահատակներ էին ապագայի անդորր կեանքի համար: Նրանց արիւնով պիտի ձեռք բերենք մեր ապագայի կուլտուրական խաղաղ առաջադիմութիւնը:

Թող չարերը գործեն յանուն չարութեան: Մենք, Կովկասեան փոքրիկ ազգութիւններս չը յուսահատուինք և հաւատանք, որ յաղթութիւնը ճշմարտութեանն է պատկանում: Ռուսիայի գահոյքի բարձրութիւնից արդէն լսուեց ճշմարիտ խոստովանութեան ձայնը, թէ չը կայ զօրութիւն առանց ժողովրդի ոյժի: Նիստեր են կազմուած, ժողովներ են գումարուում պետութեան կազմը առողջացնելու համար: Կովկասը ներկայացնում է լայնածաւալ Ռուսիայի մի մասը և կը բուժուի նոյն դեղով, որով պիտի բուժուի մարմնի ամբողջ կազմը: Կանցնին դառն ու վշտալի օրերը, կը գան ուրախ օրեր: Կը փարատուի վերջի վերջոյ տիրող խաւարը, և լոյսը կը սփռուի անխտիր ամենքիս վրայ: Միայն այն գաղափարն ունի այժմ ոյժ, որ քարոզում է եղբայրութիւն բոլոր ազգերի մէջ առանց ծագման և կրօնների խտրութեան: Այս ապացուցուած է մարդկութեան

հանճարեղ իմաստուններից և ապացուեց գործով,— փետրուարի ցոյցերով:

Որչափ է եղել Բագուի նահատակների թիւը— մինչև այսօր դեռ պարզուած չէ: Բագուի ոռւս լրագրները հետզհետէ տպագրում են նրանց ցուցակը: Հայ զոհերի թիւը քաղում են եկեղեցական գրքերից, թուրքերինը և ուրիշ ազգութիւններինը պաշտօնական տեղեկութիւններից, Վեհ. Հայրապետի Բագու ուղարկած եկեղեցական պատգամաւորների տեղեկութիւններից երևում է որ մինչև այժմ թաղուած են 193 հայ, որոնցից 7 կին, վերջիններս բոլորն էլ այրուած: Այրուածների մէջ ամենամեծը՝ 70 տարեկան է, և ամենափոքրը 10 ամսական Սպանուածներ են մեծագոյն մասամբ մշակ դասից, այրուած, քանդուած և յափշտակուած են 51 տուն և խանութ: Վիրաւորուած են 90, որոնցից այժմ մնում են 67 հոգի:

Բագուցիների մեծամասնութիւնը պնդում է, հայ սպանուածների թիւն 200-ից աւելի չէ, նոյնչափ եթէ ոչ աւելի վիրաւորուածներ, իսկ թուրք սպանուածները գուցէ նոյնչափ, գոնէ ոչ պակաս 120 հոգուց, նաև վիրաւորուածները ոչ պակաս այս թուից: Կան մարդիկ, մանաւանդ թուրքերից, որոնք պնդում են, թէ թուրքերից աւելի են սպանուած՝ քան հայերից: Վիրաւորուած կամ սպանուած են նաև ռուսներից մօտ 30 հոգի, վրացիներից մօտ 20: Ուրեմն, պիտի զգան թուրքերը, որ նրանց կատարած գործը համահաւասար չլնաս է տուել թէ մեզ և թէ իրանց: Ինչ անմիտ և վայրենի գործ, որին նրանք ծառայեցին անգիտակցաբար:

Մենք քրիստոնէաբար ներում ենք մեր հարևաններին իրանց մոլորութիւնը, ինչպէս և նրանք պիտի ներեն մեզ: Մենք մաղի չափ չենք մեղադրում նրանց նոյն իսկ այրուած մանուկների և յղի կանանց յօշոտուած մարմինների առջև: Հայերը երեխաներ չեն այրել, յղի արգանդներ չեն պատառոտել դաշոյններով: Նրանք միայն պաշտպանուել են: Պատիւ նրանց: Պատիւ և թուրքերի այն մեծամասնութեանը, որ պաշտպանել են անպաշտպան հայ ընտանիքներին և անմիջապէս միջոցների ձեռնարկել խաղաղութիւնը վերականգնելու:

Բագուն այժմ գրեթէ կիսով չափ դատարկուել է հայերից: Հայերը թողնում են թուրքերի տները և տեղափոխուում քրիստոնեաների տներ: Առուտուրը գրեթէ կանգ է առել, նախ թային արդիւնաբերութիւնը միլիօնների չլնաս է կրում, քաղաքը դարձել է զօրանոց և ենթարկուել պատերազմական դրու-

Թեան անողոք օրէնքներին: Ահա անմիտ կոտորածի հետևանքը: Եւ միայն հասարակութիւնը չէ շնասուողը, այլ և Պետութեան գանձարանը եթէ, բարոյականը մի կողմ թողնելով, վերցնենք միայն նիւթականը: Տէրութիւնը Բագուից ստանում է տարեկան 120 միլիոն ռուբլի եկամուտ—պետութեան ընդհանուր բիւջէի մի քսաներորդականը: Կարելի է երևակայել, թէ այդ ինչ զգալի կորուստ կը լինի Պետական գանձարանի համար եթէ իրերի դրութիւնն այսպէս շարունակուի:

Ուրեմն, որ կողմ նայում ենք ամենուրեք շնաս և շնաս: Ի՞նչ միտք ունէր անողորմ կոտորածը Բագուում: Ի՞նչ գաղափարի ծառայից այն...

Կոտորածը տեք ուղիղ երեք օր և երեք գիշեր: Սկսուելով փետրուարի 6-ին, մօտաւորապէս 2 ժամին, վերջացաւ փետրուարի 9-ին կէսօրից յետոյ: Երեք սև օրեր, որ Կովկասի պատմութեան, ուրեմն եւ Ռուսիայի պատմութեան մէջ պիտի բռնեն ամօթալի, խայտառակ էջեր:

Երբ խաղաղութիւնը տիրում է, թուրք և հայ հանդիպում են իրարու ուրախութեան զգացումով և անկեղծ ցաւակցութեամբ սեղմում են իրարու ձեռք: Բուն բագուցիներին մեծ մասը չի կարողանում մինչև այսօր էլ հաշիւ տալ իրան, թէ ինչպէս պատահեց փորձանքը: «Այդ մի զազիայ էր (փորձանք), երկնային պատիժ, որ եկաւ անցաւ մեր գլխով», ասում են թուրքերը: Իսկ հայերը դեռ չեն արթնացել ապշումից, այժմ էլ նրանք սոսկումով և դողալով են յիշում արիւնալի օրերը:

Ով և ինչ ևս լինի անասելի թշուառութեան սկզբնապատճառը, պիտի ապագայ պատմութեան մէջ դրոշմուի անջնջելի նախատինքով:

Միայն չորրորդ օրը կոտորածի թշուառները կարողացան տիրանալ իրանց մերձաւորների դիակներին: Մոսկալի է այն տեսարանը, որ այդ օրը ներկայացրել են հայ և թուրք գերեզմանատները և քաղաքի հիւանդանոցները: Խնայելով մեր ընթերցողների նեարդերը, կանգ չենք առնիլ այդ տեսարանի վրայ: Բայց ահա մի սրտաշարժ պատկեր, որի առջև պիտի խոնարհուի ամեն ոք և սքանչանայ հայ կնոջ անհասանելի առաքինութեան վրայ:

Այդ պատկերի նկարագիրը տալիս է «Каспий» լրագրում թուրք հրապարակախօս պ. Աղաեվը: Քաղում ենք նրա յօդուածից հետևեալ կտորը.

«...Բայց ամենից բարձր, ամենից վեհ է մի հայ կնոջ օ-

ընկալու Սյդ կինը ցոյց տուեց հոգու այնպիսի վեհութիւն, սրտի այնպիսի ազնուութիւն, այնքան պայծառ միտք և քաղաքացիական առաքինութիւն, որ արժանի է պատմութեան ամենամեծ կանանց շարքը դասուելու և փառաբանուելու յաւիտեան: Երէկ, երբ ինձ պատմեցին այն, ինչ-որ նա արել է, աչքերս ակամայ արտասուեցին, և եթէ նա նոյն բոլորին ներկայ լինէր, ես սքանչացած կընկնէի նրա առջև ծնկաչոք, կաղթէի նրան, ինչպէս ժամանակից Մադոննայի և կըհամբուրէի նրա ոտները փողին:

Ահա թէ ինչ է արել նա:

Սյդ աղքատ, բայց հոգով և սրտով մեծ կինը սարսափելի տրագիկայի ժամանակ կորցրել է իւր զաւակներին: Գերեզմանատանը, թաղման հանդիսի ժամանակ, նա, ձեռք դնելով անմեղ զոհերի դագաղի վրայ, դարձել է դէպի հայերը այս խօսքերով.

«Հայեր, Երդուեցնում եմ ձեզ այս երեխաների անմեղ հոսուած արիւնով, երդուեցնում եմ նրանց թշուառ մօր ջախջախուած սրտով, ներեցէք միտումաներին այն, ինչ-որ նրանք արել են, մի՛ զգաք նրանց գէժ թշնամութիւն, այլ սիրեցէք նրանց եղբայրական սիրով, այնպէս, ինչպէս սիրել էք միմեանց առաջ»:

«Կարող է լինել աւելի գեղեցիկ, վսեմ և բարձր բան: Սյդ կլասիքական մի կերպարանք է, որ արտասանել է կլասիքական խօսքեր: Սյդ խօսքերը պիտի ոսկէ տառերով փորագրուին և զարդարեն մեր փողոցներն ու հրապարակները: Այո, դու մեծ ես, ազնիւ հայուհի: Դու զարդարում ես այն ցեղը, որին պատկանում ես: Դու ազնուացնում ես և բարձրացնում մինչև անհասանելի բարձրութիւն այն ազգը, որի զաւակն ես: Դու քո ազնիւ սրտի մի բնական և պարզ ցնցումով հասկացել ես, թէ հայրենիքի շահը, սէրը, խաղաղութիւնը, համերաշխութիւնը, միութիւնը նրա զաւակների աւելի նշանաւոր է և բարձր, քան վրիժառութեան բնազդը, որ բնականաբար պիտի զարթնէր քո ջախջախուած մայրական սրտի մէջ: Բայց դու եղար այնքան արի, քո մէջ կար այնքան քաղաքացիական առաքինութիւն, որ խեղդեցիր այդ բնազդը, զոհելով այն հասարակական բարօրութեանը, մեր ամենքի համար թանգ Կովկասի բարօրութեանը»: Շարունակելով այս ուղղութեամբ իւր հիմնը հայ կնոջ հասցէին, թուրք հրապարակախօսը աւելացնում է:

«Երբ այս սրտաշարժ տեսարանի լուրը հայ կնոջ մարդասիրական վարմունքի մասին տարածուեց միւսուսմանների

մէջ, մի քանի անձանց նախաձեռնութեամբ որոշուեց, որ միւսիւման հոգևորականութիւնը մեծ հայ կնոջ զաւակների համար հոգեհանգիստ կատարի և նրանց գերեզմանների վրայ պսակ դրուի:

Ով չի կրել բարձրագոյն վիշտ, չի կարող երևակայել այդպիսի վեհութիւն զաւակներից զրկուած մի մօր կողմից դէպի իր սիրեցեալների անողորմ դահիճները: Թող հերոսուհի հայ կնոջ սքանչելի օրինակով ոգևորուի միսիւման կինը և իւր զաւակներին, վրիժառութեան փոխարէն, ներշնչի սիրոյ, միութեան և մարդասիրութեան վեհ զգացում: Հայ կինը դարերից է ժառանգել այս բարձրագոյն առաքինութիւնը և Բագուի թշուառ մօր վեհութիւնը հաղուադիւտ չէ հայերի մէջ, Հայ կինը ունի իրաւունք պարծենալու իւր առաքինութիւններով:

Արդէն մի ամիս է անցել Բագուի արիւնալի օրերից մինչև այս տողերի գրելը: Ինչ պիտի լինի այսուհետև—չը գիտենք: Բայց վերականգնուած խաղաղութիւնը, ինչ թագնենք, տակաւին մեզ անխախտելի չի թուում: Կովկասեան թուրքերի հետ համերաշխութիւնը պահանջում էին աւելի մեծ ջանքեր, քան կարծում են մեր լաւատեսները: Նղբայրութեան զգացումը համակել է համահաւասար թէ հայերին և թէ թուրքերին— ճիշտ է: Բայց այս զգացումը կարող է շուտով սառչել, ինչպէս արաբ սառչում է ամեն մի զգացում արևելեան ժողովուրդների մէջ: Հետևաբար, պէտք է դիմել աւելի հաստատ միջոցների: Ոգևորիչ ճառերով և հոգեհանգիստներով մենք շատ բան անել չենք կարող: Պէտք է աւելի խորը թափանցենք հայ և թուրք ազգաբնակչութիւնների այժմեան յարաբերութիւնների մէջ և աւելի լուրջ քննենք նրանց խախտման պատճառները:

Ոչն մարդիկ, որոնք մասնաւոր ժողովներում բառերի հեղեղով են ուղղւում մեզ յափշտակել, գործում են յանցանք իրանց ազգի ապահովութեան դէմ: Նրանք օգ են կտրատում իրանց սուր լեզուով, երևակայելով, թէ թշնամիներ են բրդում: Հայի դրութիւնը անապահով է ոչ միայն Անդրկովկասում, այլ և Պարսկաստանում, իսկ Տաճկաստանում այն դրութիւն չէ, այլ գեհնո: Անդրկովկասեան թուրքերի հետ հաշտութիւնը ահագին կախումն ունի տաճկահայերի հարցից: Ահա ինչի մասին պիտի մտածել, ահա ինչը պիտի վերլուծել և քննել...

Բագուն այժմ պատերազմական դրութեան մէջ է: Մարդկանց արգելուած է երեկոները 8 ժամից յետոյ փողոց դուրս գալ: Խանութները բացուել են, բայց բաւական է մի չնչին շուկ

և նրանք մի վայրկեանում փակւում են: Ժողովարանը, Թատրոնը, կրկէսը և հասարակական միւս ժողովատեղերը փակ են և դեռ յայտնի չէ երբ կըրացուին: Քաղաքը շարունակ դատարկւում է և այժմ էլ փախչողներից շատ քչերն են համարձակւում յետ դառնալ:

Գինեւրալ—նահանգապետ իշխ. Ամիլախօրիի մօտ նրա նախագահութեամբ եղան մի քանի ժողովներ, մասնակցութեամբ հայ և թուրք ներկայացուցիչների: Սօսուից արիւնալի օրերի մասին, ջանք դրուեց կոտորածի պատճառները պարզելու: Բայց և ոչ մի լուրջ եզրակացութեան չեկան:

Բազուի իրաւաբաններն առանց ազգութիւնների խտրութեան մի բաղամարդ ժողովում որոշել են ոչ մի ջանք չը խնայել քննութիւնը լիակատար դարձնելու: Նոյն մտքով որոշում են կայացրել և բօրսային յանձնաժողովը ու նաւթարդիւնաբերների ժողովը, որոնք խնդրամատոյց են եղել ֆինանսների մի-նիստրին միջամտելու, որ Պետերբուրգից բարձրագոյն քննութիւն նշանակուի:

Վերջին հեռագիրները Պետերբուրգից հաղորդեցին, որ այս խնդիրը յարգուած է: Նշանակուած է բարձրագոյն քննիչ յանձնաժողով մասնակցութեամբ բօրսային յանձնաժողովի և նաւթարդիւնաբերների ժողովի ներկայացուցիչներին:

Մինչև նշանակուած մասնաժողովի Բազու ժամանելը կը կազմուի նիւթերի մի ահաբէն սրշար: Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը արդէն հաւաքել է գրաւոր վկայութիւնների մի մեծ կոյտ: Նոյնչափ նիւթ ունեն իրանց ձեռքի տակ և Բազուի լրագրների խմբագրութիւնները նաև իրաւաբանների ընկերութիւնը: Անշուշտ հայ և թուրք հասարակութիւնները ոչ մի միջոց չեն խնայիլ խնդիրը պարզելու համար: Անշուշտ նրանք Պետերբուրգից և Մոսկվայից կը հրաւիրեն առաջնակարգ փաստաբաններ և նրանց կը յանձնեն թշուառների պաշտպանութեան գործը:

Ինքը նահանգապետ իշխ. Նակաշիձէն իւր կողմից դիմել է ներքին դորժոց նախարարին և խնդրել, որ առանձին քննիչ մասնաժողով նշանակուի: Իշխանը բարեհաճում է իրան վերաւորուած համարել հասարակութեան մէջ «ամենայամառ» կերպով տարածուած լուրերից, որոնք, ըստ իւր ասութեան, «աւրատ են ձգում» նրա երկարամեայ պետական ծառայութեան վրայ: Իշխանն իրաւացի է, այդ վատ լուրերը կարող են արատ ձգել նրա վրայ:

Այսպիսի հանգամանքներում քաղցր է մեզ յուսալ, որ

խնդիրը կը լուսաբանուի բազմակողմանի: Մենք հայերս ուրիշ բան չենք ուզում, բացի անաչառ դատից: Մենք դարերից ժառանգած քրիստոնէական համբերութեամբ և հեղութեամբ կը սպասենք արդար դատաստանի: Եւ այդ դատաստանը կը լինի մեր ջախջախուած սրտերի միակ սպեղանին...

Սպասենք, ուրեմն...

Բազուի սոսկալի կոտորածը ցնցեց ամբողջ Կովկասը: Ամենքը համակուեցին միևնոյն ծանր զգացումով, թէ հայերի և թուրքերի թշնամութիւնը մի քաղաքում կարող է արձագանք գտնել ամինուրեք, ուր այդ երկու ազգութիւնները ապրում են կից առ կից:

Չարիքի տարածման առաջն առնելու համար Կովկասի բոլոր քաղաքներում կատարուեցին հոգեհանգիստներ, որոնք իրօք մի առիթ էին հայերի և թուրքերի յարաբերութիւնները պարզելու համար: Ամինուրեք տեղի ունեցաւ նոյն սրտաշարժ տեսարանը, ինչ-որ Թիֆլիսում: Երկու ազգութիւններն էլ իրանց հոգևոր և աշխարհական ներկայացուցիչների բերանով յայտնեցին, թէ չը կայ իրանց մէջ փոխադարձ թշնամութիւն: Մի քանի քաղաքներում խօսքերը կնքուեցին հանդիսաւոր երդումով: Հայերը երդուեցին հաշտ մնալ թուրքերի մէջիթներում, թուրքերը երդուեցին հայ եկեղեցիներում և հոգևորականները, ի նշան իրանց երդման անկեղծութեան, համբուրուեցին:

Սակայն չը նայելով այս սրտաշարժ երդումներին, կասկածը տակաւին չի ողնչացել մեր սրտում: Եւ ահա մեր կասկածը քիչ մնաց արդարանար մի քանի քաղաքների վերաբերմամբ:

Հազիւ քիչ թէ շատ ուշքի էինք եկել Բազուի հարուածից, երբ հեռագիրը մեզ գուժեց, թէ Երևանում փետրուարի 20 և 21-ին հայերի ու թուրքերի մէջ եղել է զինուած ընդհարում: Սարսափը նորից պաշարեց մեզ: Բարեբաղդաբար, շուտով պարզուեց, որ սկսուած կոտորածը խափանուել է տեղական իշխանութեան արագ գործողութեան և քաղաքապետիս պ. Մելիք-Աղամալեանի եռանդի շնորհով:

Ահա ինչ է հաղորդում տխուր եղելութեան մասին պաշտօնական «Кавказ» լրագիրը.

«Փետրուարի 20-ին Երևանում, առաւօտեան մօտ տասն ու մէկ ժամին, փայտեղէնի հրապարակում երկու միւսուլմաներ կռուեցին միմեանց հետ և միմեանց կրակեցին: Այս պատճառով աղմուկ բարձրացաւ, շրջակայ խանութներից և տներից հրա-

ցանաձգութիւն սկսուեց մեծ մասամբ դէպի օդ։ Յայտնուեց, որ սպանուել են երեք հայ և մի թուրք, վիրաւորուել են մի տեղացի հրեայ, նրկու թուրք և Եօթ հայ։ Շուտով տեղ հասան հերթապահ վաշտը, ոստիկանութիւնը և ստրաժնիկներն ու անկարգութեանը վերջ տուեցին։ Նահանգապետը, պահնորդ զօրքի հրամանատարի, հայոց թեմական յաջորդի, քաղաքապետի և հայ ու միսուլման հասարակութեան ներկայացուցիչների հետ քաղաքը պտտեցին, որից յետոյ, ըստ երևոյթին, խաղաղութիւնը վերականգնուեց։

Փետրուարի 21-ին ոստիկանութեան պաշտօնեաները, պատուաւոր հայերի և միսուլմանների հետ վաղ առաւօտից պտտեցին քաղաքը և խանութները. ամեն ինչ խաղաղ էր։ Առաւօտեան մօտ 10 ժամին քաղաքում մի քանի հրացանաձգութիւններ եղան։ Նոյն պահին քաղաքի զանազան մասերում հրացանաձգութիւն սկսուեց։ Անկարգութիւնը ոստիկանութեան և զօրքերի միջոցով կէս ժամում խափանուեց։ Վաճառատները փակուեցին։ Այդ օրը սպանուեցին Եօթ միսուլման և մի հայ, վիրաւորուեցին տասներկու միսուլման և վեց հայ... Պաղատութիւնը ապահովելու համար նահանգապետը, բերդապահ զօրքի հրամանատարի համաձայնութեամբ, բացի ոստիկանական հսկումից, նշանակեց զօրքեր քաղաքի խիստ կարգապահութեան համար։

Թիֆլիսի քաղաքապետի ստացած նաև ռուսաց հեռագրական գործակալութեան տուած հեռագրների համաձայն սպանուածների թիւն է քառասուն։ Ինչպէս ասում են սրանցից 12 հայ է, 28-ը թուրք։

Ներկայումս մեր երկրի խաղաղ կեանքը խանգարուած է ամենուրեք։ Անդրկովկասի բոլոր քաղաքներից լսում են երկիւղի և կասկածի ձայներ։ Ազգաբնակչութեան ընտիր մասերը ջանք չեն խնայում ժողովուրդների մէջ հանգստութիւնը վերականգնելու։ Ամեն տեղ հայ և մահմեդական հոգևորականութիւնը ձեռք ձեռքի տուած գործում է յանուն ազգութիւնների համերաշխութեան։ Պէտք է յուսալ, որ այդ բարի ջանքերն անհետեանք չեն մնալ և Բագուի արիւնալի օրերը չեն կրկնուիլ այլուր։

Վեհափառ Հայրապետը փետր. 13-ին դիմել է Նորին Մեծութիւն Պարսից Շահին խնդրելով միջոցներ գործ դնել պարսկահայատակ հայերին պահպանելու գոհհիլ պարսիկ ամբոխի կատաղութիւնից։ Ահա այդ հեռագիրը.

«Պորին վշտով իմացայ, որ Բագու քաղաքի մուսուլման-

ներն ու հայերը, այս բաղմադարեան դրացիները, արիւնահեղ ու անմիտ ընդհարում ունենալով, որոնց մասին պատմածները սառցնում են մարդկային սիրան ու զգացմունքը, երեք օրուայ ընթացքում տուին բաղմաթիւ անմեղ զոհեր: Այս մասին հաղորդելով Ձերդ Մեծութեան, աղաչում եմ հոգ տանել իմ խաղաղ հօտի մասին, որ գտնւում է Ձեր Մեծութեան ինքնակալ դայստնի հովանու տակ:

Մկրտիչ կամողիկոս ամենայն Հայոց

Այս հեռագրին ՚ի պատասխան Հայոց Վեհափառ Հայրապետը ստացել է Նորին Մեծութիւնից հետեւալ հեռագրական պատասխանը.

«Նորին Մրբութիւն Ամենայն Հայոց կաթողիկոսին.

«Ես ինքս շատ վշտացած եմ Բագուի դէպքերից: Երջանիկ եմ հաւատաւոր, որ Պարսկաստանի հայերը օրինապահ հպատակներ են, որոնց համար ես կարող եմ Ձեզ հաւատարացնել իմ ամբողջ բարեացակամութիւնս և բարձր պաշտպանութիւնը:

Մուգաֆէր-Եղղին

Անշուշտ Նորին Մեծութիւնը, որ արդէն մարդասիրութեան շատ փաստեր է տուել մեզ, չի թոյլ տալ իւր հպատակների մէջ վտանգաւոր խլրտումներ:

Այնուհետեւ Վեհ. Կաթողիկոսը փետր. 28-ին ուղարկեց Թաւրիզ Պարսից գահաժառանգին հետեւեալ հեռագիրը.

«Նորին Կայսերական Բարձրութիւն Վալիահդին.

«Զնայելով այն ցաւալի և արեւնահեղ դէպքերին, որոնք տեղի ունեցան Բագու և Երևան երկու դարաւոր բարեկամների՝ հայ և միւսուլման դրացիների մէջ, համաձայնութիւնը և խաղաղութիւնը հաստատուած են երկու ժողովրդի կրօնաւորների բարեացակամ միջամտութեան ջնորհիւ: Մնդրում եմ Ձերդ Կայսերական Բարձրութեան Ձեր բարձր հովանաւորութեան տակ առնել Ձեր հաւատարիմ հայ հպատակներին, որոնք միշտ վայելել են իրանի վեհապետների հայրական խնամքը:

Վալիահդը պատասխանել է հետեւալը. «Էջմիածին, Նորին Մրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա.ին:

«Ծաւում եմ անակնալ դէպքի համար, բայց և հրճում եմ երկու կողմերի հաշտութեան վերայ: Ինչ-որ վերաբերում է մեր հայ հպատակներին, նոքա բարի յարաբերութեան մէջ են միւսուլմանների հետ և միշտ բարեբաղտ են մեր պաշտպանութեան ներքոյ:

Վալիահդ.

Հայ ինտելիգենցիայի, մամուլի և բոլոր հասարակական մարմինների բարոյական պարտականութիւնները ներկայ հան-

գամանքներում բաղմապատկուած են: Նրանք պէտք է լարեն բոլոր իրանց ոյժերը, եռանդը և խօսքով ու գործով ճգնեն համերաշխութեան գաղափարն ընդարձակ սփռել ազգութիւնների մէջ: Զը պիտի այժմեան թշուառութեան բոլոր մեղքը ձգել «շայթանի» վրայ և նստել անդործ: Բագուի դէպքերի մէջ ահագին դեր ունին մեզ շրջապատող տգիտութիւնն ու խաւարը: Եթէ հայ և միւսուաման ամբոխները լինէին աւելի քաղաքակրթուած, ոչ մի «շայթան», ոչ մի արաաբին չար ոյժ չէր կարող նրանց դրդել եղբայրասպան կոիւ մղելու միմեանց դէմ: Կովկասը դեռ շատ է յետ մնացել քաղաքակրթութիւնից: Զը համեմատենք մեզ Ռուսիայի խորքերի կոյր խուժանի հետ և մեզ միխիթարենք, դարձնենք մեր հայեացքը դէպի աւելի լուսաւոր վայրեր, դէպի Եւրոպայի ժողովուրդները... Տարածենք լոյս և ուսում, ահա մեր լաւագոյն ապագայի յենարանների գլխաւորը...

Լայնատարած Ռուսիայի միայն ծայրերը չեն խլրտուած, այլ և կենդրոնը և բոլոր կողմերը: Ամենուրեք տիրում է կարգերի ակնյայտ քայքայում: Քիշինիւի սոսկալի եղեռնագործութիւնները այժմ տեղի ունեն շատ քաղաքներում: Մենք միջոց չունինք արձանագրելու այն բոլորը, ինչ-որ կատարուած է ներկայումս ներքին Ռուսիայում:

Առաջ ենք բերում մի եղելութիւն, որ խիստ բնորոշ է ներկայ Ռուսիայի կացութեան համար:

Անցքը կատարուել է Կուրսկ քաղաքում, փետրուարի 12-ին: Այդ օրը տեղական գիմնազիօնի աշակերտները ժողով են կազմում դպրոցում իրանց դպրոցական ներքին խնդիրների մասին խորհրդակցելու: Ժողովը վերջանալուց յետոյ աշակերտները թողով 200 հոգի դիմում են դէպի սեմինարիա և կանանց գիմնազիօն, որ իրանց վճիռը յայտնեն այդ դպրոցների աշակերտներին: Աշակերտները, պատմում է «Русь» լրագիրը, ընթանում էին քաղաքի գլխաւոր փողոցով զոյգ զոյգ: Այս խաղաղ հանդիսի առջև կառքով գնում էր ոստիկանապետ Ջարինը: Հետեւակ և ձիաւոր ոստիկաններն ու ստրաժնիկները հետևում էին աշակերտների խաղաղ հանդիսի ետևից: Յանկարծ, երբ հանդէսը մօտեցել էր օրիորդների գիմնազիօնին, ոստիկանապետը բոլորովին անսպասելի և առանց որևէ առիթի բարձրաձայն գոչում է. «ձեծեցէք»: Ստրաժնիկները բաժանուած են և յարձակուած են մտրակներով անպաշտպան մանուկների վրայ և սկսում անխնայ ծեծել նրանց: